



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱԼԱԹԻՈՅ

ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

31-ՐԴ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻ



Գումարուած ի Փրավիտէնս, Բ. Ա.

Սեպտեմբեր 1, 1934

4432

062

Մ-16

062
Մ-16

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

06 JUN 2009

ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
31-ՐԳ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Գումարուած ի Փրավիտէնս, Բոս Այլլնոս
Սեպտեմբեր 1, 1934

Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան 31-րդ Պատ-
շամաւորական Ժողովը գումարուեցաւ Սեպտ. 1-ին,
1934, Շաբաթ կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Բէտմէնզ Զօլ,
775 Westminster St., Providence, R. I.

Փրավիտէնսի Տիկնանց Մ. Ճիւլի ատենադատուհի՝
Տիկին Աղաղարեան կարգաց զբաւոր ուղերձ մը՝ ուղ-
ղուած պատգամաւորներու՝ իրրեւ բարի գալուստի ող-
ջոյն եւ հրաւիրեց Կեդր. Վարչութեան Քարտուղարը՝
Պր. Լ. Թերխանեան՝ ժողովին ընթացք տալու համար:

Պր. Թերխանեան հակիրճ կերպով ժողովի բնոյթին
եւ անոր կատարելիք ղերին մասին անդրադառնալէ ետք,
31-րդ Պատգ. Ժողովը բացուած յայտարարեց: Չեռնրաց
քուէներու մեծամասնութեամբ առժամեայ ղիւան նշա-
նակուեցաւ.

Ատենապետ՝ Յարութիւն Փիլիպպոսեան

Ատենադպիր՝ Նշան Կանանեան

Ժողովը նշանակեց երեք հոգինոց Ստուգիչ Յանձնա-
խումբ մը, պատգամաւորներու եւ ընդհանուր Մասնա-
ճիւղերու իրաւասութիւնը ճշտելու համար.

Արմենակ Մուրատեան

Լեւոն Գաւուգճեան

Յովհաննէս Ուանցեան

Ժողովին միջնադարար յայտարարուեցաւ, մինչեւ
որ Ստուգիչ Յանձնախումբը Կեդրոնի ներկայացուցիչնե-
րու հետ խորհրդակցարար կըրցաւ ճշտել պատգամաւորնե-
րու ինքնութիւնը:

Յանձնախումբը իրաւասու յայտարարեց 26 Մ. Ճիւ-
ղեր 38 ձայներով:



36

(4432)

Կեղրոնական Վարչութիւնը տուաւ հետեւեալ Մ.Ճիւղերու անունները, որոնք տեղի հեռաւորութեան պատճառաւ իրենց ձայները կուտային Դիւանին.

- Քլիվլէնտի Կանանց Մ.Ճիւղ 2 ձայն
- Երուսաղէմի Մ.Ճիւղ 1 »
- Վալանսի Կանանց Մ.Ճիւղ 2 »
- Պոլէնի Արանց Մ.Ճիւղ 1 »
- Ռոմանի Կանանց Մ.Ճիւղ 1 »

Ծանօթ. — Ժողովէն կը բացակայէին Ֆրէդնոյի, Մարտէյլի եւ Հալէպի իրաւասու Մասնաճիւղերը:

Դիւանի տրուած ձայները Պատգ. Ժողովին կողմէ բաշխուեցան հետեւեալ իրաւասու Կրթասիրացի անդամներուն, որոնք ժողովին ներկայ էին:

Քլիվլէնտի երկու ձայները յանձնուեցան Կարապետ Թաշճեանի եւ Աւետիս Գ. Աւետիսեանի: Երուսաղէմի մէկ ձայնը՝ Սեդրակ Տաղլեանի: Վալանսի երկու ձայները՝ Տիկ. Հայկուհի Թերթանեանի եւ Տիկ. Օժէն Չէքմեանի: Պոլէնի ձայնը տրուեցաւ Մելգոն Պրիքճեանի, իսկ Ռոմանի Կանանց Մ.Ճիւղի մէկ ձայնը՝ Միսաք Աւետիսեանի:

Ժողովը որոշեց խորհրդակցական ձայնով հրաւիրել կարգ մը հայրենակիցներ ալիւալլ Մ.Ճիւղերէ. — Խ. Պոնափարթեան, Ա. Աղմէլեան եւ Յ. Ուրլիեան՝ Նիւ Եորքէն: Ն. Մարգարեան՝ Ուստրէն: Յաջորդ օրուան (Կիրակի) նիստին եւս իբրեւ խորհրդական՝ նորեր հրաւիրելու պարագան նկատի առնուեցաւ, եթէ պատգամաւորներ յարմար դատէին:

Ընտրուեցան հետեւեալ Յանձնախումբերը. —

Ա. — Յարաբերական Յանձնախումբի անդամ ընտրուեցան Պարոնայք Յովհ. Խանցեան, Աւետիս Աւետիսեան, Սարգիս Մանուչեան:

Բ. — Հաշուեցնիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան Պարոնայք Նշան Կանանեան, Ռուբէն Պարմադեան, Արմենակ Մուրատեան:

Գ. — Հարցեր դասաւորող Յանձնախումբի անդամ ընտրուեցան Պարոնայք Վահան Տ. Դաւիթեան, Յովհ. Նազարէթեան եւ Տիկ. Հայկուհի Թերթանեան:

Դ. — Դիւանի եւ ուրիշ ընտրութեանց առթիւ թեկնածուներու եռապատիկ ցանկ պատրաստելու համար նշանակուեցան Պարոնայք Ասատուր Գալուստեան, Յովհաննէս Խարրութեան եւ Վահան Տ. Դաւիթեան:

Մնայում Դիւանի ընտրութիւն

Եռապատիկ ցանկի վրայէ գաղտնի քուէներու մեծամասնութեամբ ընտրուեցաւ միայն զիւանը հետեւեալ կերպով.

- Ատենապետ՝ Պր. Ս. Մանուչեան
- Փոխ Ատենապետ՝ Յ. Փրիլպպոսեան
- Ատենադպիր՝ Պր. Յ. Խանցեան
- Փոխ Ատենադպիր՝ Պր. Ռ. Պարմադեան

Նկատի ունենալով որ Յանձնախումբերու պէտք է ժամանակ տալ իրենց աշխատանքները կատարելով յաջորդ օրուան նիստերուն ղեկուցանելու, առաջին նիստը փակուեցաւ իրիկուան ժամը 7:30-ին, յաջորդ նիստը Կիրակի առտու ժամը 10-ին վերսկսելու որոշուով:

31-րդ Պատգ. Ժողովի Լրիւ Կազմը

1. — Կեդր. Վարչութիւն — Լ. Թերթանեան (1 ձայն)
2. — Քլիվլէնտ Արանց — Վ. Տ. Դաւիթեան (1 ձայն)
3. — Քլիվլէնտ Արանց — Գ. Տ. Գէորգեան (1 ձայն)
4. — Քլիվլէնտ Կանանց — Կ. Թաշճեան (1 ձայն)
5. — Քլիվլէնտ Կանանց — Ա. Գ. Աւետիսեան (1 ձայն)
6. — Տիքրոյք Արանց — Հ. Օրմանեան (1 ձայն)
7. — Հէյվրիի Խառն — Լ. Գալուստեան (1 ձայն)
8. — Փրավիտէն Արանց — Յ. Խարրութեան (1 ձայն)
9. — Փրավիտէն Արանց — Յարութիւն Աւետիսեան (1 ձ.)
10. — Փրավիտէն Կանանց — Տիկ. Խ. Երկանեան (1 ձ.)
11. — Պէյրուք Արանց — Խաչ. Մանուչեան (2 ձայն)
12. — Վոֆէկըն Արանց — Յովհ. Մարգարեան (1 ձայն)
13. — Նիւ Եորք Արանց — Պ. Առաքելեան (1 ձայն)
14. — Նիւ Եորք Կանանց — Տիկ. Մ. Տօնապետեան (1 ձ.)
15. — Ուստր Կանանց — Տիկ. Մ. Կէղիւրեան (1 ձայն)
16. — Ուստր Արանց — Ասատուր Գալուստեան (1 ձայն)
17. — Ուստր Արանց — Սարգիս Մանուչեան (1 ձայն)
18. — Ֆիլատ. Բ. Կանանց — Տիկ. Մ. Մազմանեան (1 ձ.)



9673-57

- 19.— Գիլատ. Բ. Կանանց — Տիկ. Մ. Մօթիեան (1 ձ.)
- 20.— Գիլատէլֆիա Արանց — Յար. Փիլիպպոսեան (1 ձ.)
- 21.— Գիլատէլֆիա Արանց — Յովհ. Նազարէթեան (1 ձ.)
- 22.— Պոսքոն Կանանց — Տիկ. Ա. Պարմազեան (1 ձայն)
- 23.— Պոսքոն Արանց — Ռ. Պարմազեան (1 ձայն)
- 24.— Երուսաղէմ Արանց — Ա. Աղազարեան (1 ձայն)
- 25.— Գիլատէլֆիա Արանց — Ս. Մանուշեան (1 ձայն)
- 26.— Բոման Արանց — Յ. Խանցեան (1 ձայն)
- 27.— Բոման Կանանց — Մ. Աւետիսեան (1 ձայն)
- 28.— Վալանս Կանանց — Տիկ. Օ. Չէքէմեան (1 ձայն)
- 29.— Վալանս Կանանց — Տիկ. Հ. Թերիսանեան (1 ձայն)
- 30.— Վալանս Արանց — Արմենակ Մուրատեան (2 ձայն)
- 31.— Լիոն Արանց — Նշան Կանանեան (2 ձայն)
- 32.— Ս. Շաւոն Արանց — Լեւոն Մուրատեան (2 ձայն)
- 33.— Պոլէն Արանց — Մելքոն Պըլիքճեան (1 ձայն)
- 34.— Վիէն Արանց — Սեդրակ Տաղլեան (1 ձայն)

Ծանօթ.— Վերջին պահուն Պր. Ս. Տաղլեան Վիէնի Մ. ճիւղէն յանձնարարական նամակով իբրեւ անոր պատգամաւորը ներկայացաւ, որով իրեն տրուած Երուսաղէմի ձայնը փոխանցուեցաւ Պր. Արամ Աղազարեանի:

ՆԻՍՏ Բ

Երկրորդ նիստը սկսաւ Կիրակի առտու (Սեպտ. 2) ժամը 10-ին: Ներկայ էին բոլոր պատգամաւորները: Նախորդ նիստի արձանագրութիւնը կարդացուելով վաւերացուեցաւ:

Կարդացուեցաւ 30-րդ Պատգ. Ժողովի արձանագրութիւնը, որ առանց դիտողութեան, միաձայնութեամբ վաւերացուեցաւ:

Կարդացուեցան շնորհաւորական ողջոյնի հեռագիրներ՝ Վոքէկընի Մ. ճիւղէն, Նոր Մալաթիոյ Շին-Յանձնախումբէն եւ Նիւ Եորք գումարուած Հօկ-ի 8-րդ համագումարէն, որոնք մեծ խանդավառութեամբ եւ բուռն ծափերով ընդունուեցան:

Որոշուեցաւ առ ի գնահատութիւն եւ շնորհակալութիւն՝ ողջոյնի հեռագիրներ յղել Նոր Մալաթիոյ Շին-

Յանձնախումբին, Հօկ-ի 8-րդ համագումարին եւ Խորհ. Հայաստանի Ժողկաթխորհին մասնաւորապէս, անոնց՝ Նոր Մալաթիոյ համար ըրած նիւթական լայն աջակցութեան եւ ցուցադրած հոգածու վերաբերմունքին առթիւ:

Ժողովը նոյնպէս յարմար դատեց Ամերիկահայ Ազգային Առաջնորդարանին զրկել ցաւակցական նամակ մը Պատգ. Ժողովին կողմէ՝ Դուրեան Սրբազանի անողորմ սպանման առթիւ, միաժամանակ դատապարտելով անլուր ոճրին հեղինակները:

Նամակներու Ընթերցում

Առ ի գիտութիւն կարդացուեցան հետեւեալ նամակները, որոնց՝ ժողովը պիտի անդրադառնար օրակարգի ընթացքին:

Կարդացուեցաւ նամակը Յակոբ Նաճարեանի եւ Գրիգոր Թիֆլիսիճեանի, միասնաբար գրուած Նոր Մալաթիայէն, համագումարէն խնդրելով որ Ընկերութեան ուսանողական ծրագրի տրամադրութեան համաձայն՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար ընդունուին իբրեւ Կրթասիրացի սաներ, խոստանալով ծառայել Նոր Մալաթիոյ, իրենց ուսումնական ընթացքը աւարտելուն:

Կարդացուեցաւ նամակը Տոքթ. Միքայէլ Քէշիշեանի Պէյրութէն, իր փոքր զաւակին դատախարակութեան սատարելու խնդրանօք: Նոյնիմաստ նամակ մը կարդացուեցաւ Ալթուն Արսլանեանէ եւ Ալիս Արսլանեանէ, միաժամանակ շնորհակալութիւն յայտնելով իրենց եղած օժանդակութեան առթիւ:

Կարդացուեցաւ նոյնպէս Մ. Արսլանեանի նամակը Երեւանէն, որով կը բողոքէր որ 30-րդ Պատգ. Ժողովը իր անցուցած բանաձեւով լրիւ արդարութիւն ըրած չէր Արսլանեանի նկատմամբ, քանի իր դէմ եղած ամբաստանութիւնները չէին որակուած իբրեւ բացարձակ զրուպարտութիւններ, եւ անոնց հեղինակները իբրեւ զրուպարտիչներ, եւ ըստ այնմ ալ ստացած պատշաճ դատապարտութիւնը անոնց, իսկ իրեն՝ բացառապէս արդարացումը:

Հարց 1.— Մ. Ֆիլզերու Համարատուութիւն

Իւրաքանչիւր Մ. Ֆիլզի պատգամաւոր տուաւ ամփոփ տեղեկութիւն իր Մ. Ֆիլզի մէկ տարուան գործունէութեան շուրջ: Անոնց բացարձակ մեծամասնութիւնը իրենց գոթան գերակատարած ըլլալուն համար, ստեղծեցին խանդավառ միջնորդութիւն, որու ընթացքին ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը միաձայնութեամբ.—

«Պատգամաւորական Ժողովը գոհունակութեամբ լրացեց Մ. Ֆիլզերու նիւթական եւ բարոյական համարատուութիւնը, որոնք հակառակ տիրող տնտեսական ծանր պայմաններու, ճշնոյ մեծամասնութեամբ նիւթական թէ բարոյական պարտականութիւնները լրիւ կատարած էին:

Պատգ. Ժողովը գնահատելով այսպիսի Մ. Ֆիլզերու գործունէութիւնը, միաժամանակ կը ցանկայ եւ կը թելադրէ որպէս զի այն Մ. Ֆիլզերը որոնք տակաւին անկազմակերպ վիճակ մը ունին եւ անոնք որոնք թերացած են իրենց պարտականութեանց մէջ, այսպիսիք վերակազմուին եւ իրենցմէ ակնկալուած պարտականութիւնները լրիւ կատարեն:

Պատգ. Ժողովը նկատի ունենալով նաեւ Ֆիլատէլֆիոյ (Ա.) Արանց եւ (Ա.) Տիկնանց մասնաճիւղերը, որոնք իրենց հակաօրինական ընթացքով վնաս պատճառած են տեղւոյն վրայ գտնուող եւ Կեդր. Վարչութեան ենթարկուող (Բ.) Արանց եւ (Բ.) Տիկնանց Մ. Ֆիլզերուն շինիչ եւ օգտակար գործունէութեան, 31-րդ Պատգ. Ժողովը լուծուած կը յայտարարէ (Ա.) Արանց եւ (Ա.) Տիկնանց Մ. Ֆիլզերը, եւ մի-միայն կը ճանչնայ ու կը հաստատէ Ֆիլատէլֆիոյ (Բ.) Արանց եւ (Բ.) Տիկնանց Մ. Ֆիլզերը որպէս Ֆիլատէլֆիոյ միակ օրինական Արանց եւ Տիկնանց Մ. Ֆիլզեր»:

Հարց 2.— Կեդրոնական Վարչութեան Զեկոյցը

Կեդր. Վարչութեան Քարտուղարը կարգաց զրաւոր գեկոյց մը, մէկ տարուան նիւթական եւ բարոյական գործունէութիւնը պատկերացնող: Նոյնպէս կարգացուեցաւ Ֆրանսայի Շրջանի համարատուութիւնը: Պատգ. Ժողովը որոշեց, որպէս զի այդ գեկոյցը մաս կազմէ

Պատգ. Ժողովի արձանագրութեան, որուն համար միաձայնութեամբ հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ.—

31-րդ Պատգ. Ժողովը լսելով Կեդր. Վարչութեան մէկ տարուան նիւթական թէ բարոյական գործունէութեան տեղեկատուութիւնը, նաեւ լսելով Կեդր. Վարչութեան թեր ու դէմ եղած հարցապնդումները, ինչպէս նաեւ հաշուեքննիչ ու յարաբերական թուղթերը քննող Յանձնախումբերու գեկոյցները, կը գտնէ որ Կեդր. Վարչութիւնը գոհացուցիչ կերպով կատարած է իր վրայ դրուած պարտականութիւնները, որուն համար կը յայտնէ իր գոհունակութիւնը Կեդր. Վարչութեան ամբողջական կազմին եւ մասնաւորապէս կը գնահատէ Ատենադպիր Լ. Թերիսանեանի, Գանձապահ Խ. Ոսկերիչեանի Ժրջան եւ ծանր աշխատանքները: Ժողովը միաժամանակ պարտք կը զգայ իր շնորհակալութիւնը յայտնել Վահան Տ. Դաւիթեանի որ իր աշխատանքի մեծ բաժինը տուած է Կեդր. Վարչութեան կողքին իրրեւ քարտուղար, առանց ունէ նիւթական վարձատրութեան»:

Նիստը փակուեցաւ ժամը 2.30-ին Կ. Ե., յաջորդ նիստը ժամը 4-ին սկսելու որոշումով:

ՆԻՍՏ Գ

Երրորդ նիստը սկսաւ Կիրակի կէսօրէ ետք ժամը 4-ին: Ներկայ էին բոլոր պատգամաւորները առանց բացառութեան: Նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով վաւերացուեցաւ:

Հարց 3.— Նիւթական Հաշուետուութիւն

Յանձնախումբը տուաւ իր գեկոյցը Մասնաճիւղերու թէ Կեդրոնի հաշիւներուն նկատմամբ: Դիտողութիւններ եղան Մ. Ֆիլզերէ ոմանց սխալ հաշուապահական ձեւերու նկատմամբ: Կեդրոնի հաշիւները դառած էին մաքուր եւ ճշգրիտ, միաժամանակ վաւերացուած օրինական հաշուապահէ, որուն համար Ժողովը իր գնահատանքի քուէն տուաւ:

Դիտողութիւն.— Պր. Պ. Առաքելեան, Նիւ Եօրքի Արանց Մ. Ֆիլզի պատգամաւորը, բողոք-հրաժարական

մը ձգելով զիւանին հեռացաւ, որուն նկատմամբ ժողովը միաձայնութեամբ հետեւեալ բանաձեւը ընդունեց. —

«Նիւ Եորքի Մ. ճիւղի պատգամաւոր Պօղոս Առաքելեան իր հրաժարականը տուաւ զիւանին այն ամբաստանութեամբ թէ ժողովը կը տարուի կուսակցական հակամարտ կիրքերով եւ հակա-կանոնադրային ընթացքով:

«31-րդ Պատգ. ժողովը նկատելով որ սոյն պատգամաւորի վերադրումները բացարձակապէս զրպարտիչ եւ անճիշտ են, եւ նկատելով որ յիշեալը չէր կամեցիր ինքզինքը ենթարկել մեծամասնութեան ձայնին, ժողովը խստիւ կը դատապարտէ անոր այդ հակա-կանոնադրային ընթացքը եւ անարգական կը գտնէ վերադրումները, միաժամանակ ցաւ յայտնելով որ Նիւ Եորքի Արանց Մ. ճիւղը կը զրկուի իր օրինական ձայնէն, իր պատգամաւորին ապօրինի ընթացքովը:

Հարց 4. — Կանոնագրային փոփոխութիւն

Ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը միաձայնութեամբ: — «31-րդ Պատգ. ժողովը կը հաստատէ 30-րդ Պատգ. ժողովի կատարած կանոնադրային փոփոխութիւնները, բացի Երկրորդ Յօդուածէն, որու փոխան ժողովը կ'ընդունի որպէս Բ. Յօդուած՝ կարգաւ ստալէս.

Յօդուած Բ. — «Ընկերութեան նպատակը պիտի ըլլայ Նոր Մալաթիոյ մէջ ներկայիս գտնուող վարժարաններէն աւելի բարձր վարժարան մը հիմնել, Ամերիկայի արտասահմանեան Մալաթիացիներու օժանդակութեամբ, եւ Նոր Մալաթիոյ համայնքին տնօրէնութեան տակ»:

Կեդրոնի կողմէ գրուած Ա. եւ Բ. հարցերը ընդունուեցան Պատգ. ժողովին կողմէ կանոնադրային տրամադրութեանց մասին, այն է.

Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան կանոնադրի Առաջին, Երկրորդ եւ 13-րդ Յօդուածներէ զատ, ուրիշ ամէն Յօդուած Պատգամաւորական ժողովներու կողմէ կարելի է բարեփոխել ներկաներու երկու երրորդի մեծամասնութեամբ, պայմանաւ որ առաջարկուած բարեփոխութիւնը Կեդր. Վարչութեան կողմէ առնուազն երեք ամիս առաջ զրկուի բոլոր Մ. ճիւղերուն, զանոնք քննե-

լու, եւ ըստ այնմ իրենց պատգամաւորները հրահանգելու համար:

2. — Մասնաճիւղեր պարտաւոր ըլլան պատգամաւորներու վերադարձէն յետոյ կազմել իրենց վարչութիւնները: Այն Մ. ճիւղերը որ կը թերանան, անոնց վարչութիւնները պատասխանատու նկատել, եւ զրկել յաջորդ Պատգ. ժողովի մէջ ձայն ունենալէ:

Հարց 5. — Նիւքալան Գօթա (Բաժին)

Նկատի ունենալով Կրթասիրացի յաջորդ տարուան կարիքները, ժողովը որոշեց մէկ տարուան համար Պատգ. ժողովի կողմէ նշանակել Գօթա իւրաքանչիւր Մ. ճիւղի համար, անոնց լրիւ կատարումը բարոյապէս պարտադիր դարձնելով բոլորին համար:

Հարց 6. — Պահեստի Գումար

Նկատի ունենալով որ մօրկէյնի ժամանակաշրջանը լրանալուն՝ Ընկերութիւնը դէմ յանդիման կրնայ գրտնուիլ նիւթական յաւելեալ վճարումի, մօրկէյնի վերանորոգման համար, որոշուեցաւ տանը եկամուտէն առանձնապէս, իսկ ուրիշ աղբիւրներէ, եթէ Կեդր. Վարչութիւնը հարկ դատէ, որոշ գումարներ պահեստի ունենալ, վերոյիշեալ նպատակին միայն գործածուելու համար:

Հարց 7. — Զարքըրի Սրբաբուրիւն (ուղղում) Լնկերութեան Անուի եւ Կեդր. Վարչութեան վայրի փոփոխութեան մասին. —

Նկատի ունենալով որ Ընկերութեան ընդունուած գործածական անունը եղած է Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութիւն (Educational Society of Malatia), իսկ չարթըրին մէջ արձանագրուած է Malatia Educational Society, 31-րդ Պատգ. ժողովը կը հրահանգէ նորոշուիլ Կեդր. Վարչութիւնը եւ իրաւասութիւն կուտայ անոր, որպէս զի հարկ եղած օրինական փոփոխութիւնը կատարուի Ընկերութեան անունը արձանագրելով՝

“EDUCATIONAL SOCIETY OF MALATIA”

31-րդ Պատգ. Ժողովը նկատի ունենալով նախորդ Պատգ. Ժողովի որոշումը, Կեդրոնը Քլիվլենտ, Օհայո փոխադրելու մասին, գտաւ որ Ընկերութեան զերազոյն չահերէն թելադրուած է, եւ որոշեց Կեդրոնը դարձեալ հոն պահել: Պատգամաւորական Ժողովի իրաւասութեան սահմանին մէջ կ'իյնայ Կեդր. Վարչութեան վայրի փոփոխութիւնը Ամերիկայի ուրիշ մէկ Նահանգին մէջ, եւ այսու 31-րդ Պատգ. Ժողովը իրաւասութիւն կուտայ նորընտիր Կեդր. Վարչութեան՝ Կեդրոնի վայրի փոփոխութեան սրարազան եւս մտցնել Նիւ Եորք Նահանգի մեր ունեցած «Չարքը»-ին մէջ:

Հարց 8.— Նոր Մալաթիոյ Շէնֆերուս Եկամուտը Ժողովը որոշեց հրահանգել Նոր Մալաթիոյ Շին-Յանձնախումբը, որպէս զի Նոր Մալաթիոյ մէջ Ընկերութեան կառուցած բնակարաններէն վարձք գանձուի եւ արդիւնքը յատկացուի նոր բնակարաններու շինութեան:

Հարց 9.— Ընդհ. Մալաթիացիներու Մարդասիրտը Նորընտիր Կեդր. Վարչութեան ձգուեցաւ ընթացք տալ այս հարցին իրեն յարմար դատած եղանակով:

Հարց 10.— Նոր Ճարտարարուեստի Հարց Նկատի ունենալով Ընկերութեան պիւտճէյի անբաւարարութիւնը ճարտարարուեստի նոր ճիւղ մը հիմնելու համար, որոշուեցաւ Նոր Մալաթիոյ մէջ արդէն գոյութիւն ունեցող արդիւնաբերութեանց զարկ տալ, մասնաւորապէս այս տարուան ընթացքին, ուժ տալով ներդադրին եւ անոր յարակից բնակարանաշինութեան:

Ծանօթութիւն.— Այս հարցին յարակից, Ժողովը որոշեց պարտադրել Կեդր. Վարչութիւնը, որպէս զի դիմէ Շին-Յանձնախումբին որ Նոր Մալաթիոյ մէջ եղած արդիւնաբերութեան ելեմատական հաշիւները եւ արդիւնքը հաղորդէ Կեդր. Վարչութեան, հաստատուած վերըստուղիչ յանձնախումբէն:

Հարց 11.— Նոր Անդամներ եւ Մ.Ֆիւլքեր Նոր անդամներ աւելցնելու եւ նոր Մ.Ֆիւլքեր հիմնելու հարցը ըլլալով կազմակերպական խնդիր, անոր ա-

ռարկայական լուծումը ձգուեցաւ Կեդր. Վարչութեան, Մ.Ֆիւլքերը ախտաւորուելու եւ անոնց մէջ տեսակ մը ընկերային մրցում յառաջացնելու միջոցներով:

Երրորդ նիստը փակուեցաւ ժամը 8.10-ին, նկատի ունենալով որ Տիկնանց Մ.Ֆիւլքը ընդունելութեան սեղան սարքած էր պատգամաւորներուն համար:

Որոշուեցաւ յաջորդ առտու նիստը բանալ ժամը 10-ին:

ՆԻՍ Դ.

Չորրորդ նիստը բացուեցաւ Երկուշաբթի (Սեպտ. 3) առտու ժամը 10-ին: Ներկայ էին բոլոր պատգամաւորները բաց ի Նիւ Եորքի պատգամաւորէն:

Նախորդ նիստի արձանագրութիւնը կարդացուելով վաւերացուեցաւ:

Հարց 12.— Յարաբերական Յանձնախումբի Զեկոյցը.—

«Յարաբերական Յանձնախումբը քննելով Կեդր. Վարչութեան տարուան մը ընթացքին ունեցած թղթակցութիւնները, կը գտնէ որ Կեդրոնը կատարած է յարաբերութիւն 30 Մ.Ֆիւլքերու եւ այլ բազմաթիւ հասարակական հիմնարկներու հետ, որոնց կարգին են Սորհ. Հայաստանի Ժողկոմխորհը, Հօկ-ի Գլխաւոր Վարչութիւնը, Նոր Մալաթիոյ Շին-Յանձնախումբը, Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնը, Ամերիկայի Հօկ-ի Կեդր. Վարչութիւնը եւ կարգ մը Հայրենակցական Միութիւններու Կեդրոններ:

Կեդրոնը գրած է 360 նամակներ, 6 չըջարեալ աններ: Գումարած է 52 վարչական նիստեր եւ երկու բացառիկ ժողովներ:

Նոր Մալաթիոյ շինարարութեան յարակից խնդիրներու մասին Կեդրոնը ստացած է նամակներ Ժողկոմխորհի գործերու վարիչէն, Հօկ-ի Գլխաւոր Վարչութեանէն, Շին-Յանձնախումբէն, Մ. Արսլանեանէ եւ Տոքթ. Մանուշեանէ:

Այս բոլոր քննութիւններէն Յանձնախումբը արձանագրութեան արժանի կը գտնէ հետեւեալ փաստերը եւ թելադրութիւնները:

Ա.— Որ Խորհ. Հայաստանի Կառավարութիւնը Նոր Մալաթիոյ Համայնքին կուտայ Հարկ եղած նիւթական թէ բարոյական զփանդակութիւնը, սատարելով անոնց շինարարութեան ինչպէս նաեւ կուլտուրական պահանջներուն:

Բ.— Որ Նոր Մալաթիոյ 22 տունները հաղիւ կը բաւարարեն ներկայիս հոն բնակող 250 շունչին, եւ հարկ է առաջացնել նոր բնակարանաշինութիւն, ներդադրողներ փոխադրելու համար:

Գ.— Որ Գր. Վարդանեանի նախաձեռնութեամբ Նոր Մալաթիոյ, Նոր Սեբաստիոյ, Նոր Տիգրանակերտի, Նոր Կեսարիոյ եւ Նոր Թոմարզայի ներկայացուցչական Ժողովը գումարուած Երեւանի մէջ, յաջողած է խմելու-ջուրի հարցը լուծել, մեզ բաժին հանելով 5,000 տոլար, որ Կեդր. Վարչութիւնը անմիջապէս փոխադրած է փարիզ, Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնին, Համաձայն Գր. Վարդանեանի հրահանգին»:

«Ջուրի հարցին յարակից մեր Ֆինանսական դոթայի կատարումը իբրեւ յաջողութիւն նշելով մէկտեղ, Յանձնախումբը պարտք կը դնէ նորընտիր Կեդր. Վարչութեան վրայ, որպէս զի խնդրոյ առարկայ հիմնարկութեանց Կեդրոններուն վրայ ազդէ բոլոր կարելի միջոցներով, որպէս զի անոնք եւս շուտով կատարեն իրենց գոթան, քանի որ առանց անոնց բաժնի կատարման՝ կարելի չէ ջուրի հարցի առարկայական լուծումը»:

Դ.— «Որ Կեդրոնը ջուրի հարցին Ֆինանսական մեր բաժնին ապահովելէ զատ, իր ունեցած կարելիութիւններով գոհացում տուած է Նոր Մալաթիոյ Համայնքին փոխադրական դժուարութիւնը հարթելու, ղրկելով անոնց օթօ-քրաֆ մը իր յարակից յաւելուածական մասերով:

Ե.— «Ֆրանսայի շրջանի եւ Կեդրոնի յարաբերութիւնները եղած են ներդաշնակ եւ արդիւնաւոր, անոնք Կեդր. Վարչութեան հրահանգով գնահատելի աշխատանք կատարած են 25,000 ասեղներու գնման եւ ուղարկման գործը ղեկըացնելով Նոր Մալաթիոյ արտելին համար:

Յանձնախումբը կը յանձնարարէ 31-րդ Պատգ. Ժողովին՝ Ֆրանսայի շրջանին համար ճանչնալ «Շրջ. Գործադիր Մարմին» համաձայն կանոնագրի 5-րդ յօդուածին, փոխան դայն կոչելու Ներգաղթի Յանձնախումբը»:

Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ ընդունեց Յանձնախումբի վերաբերեալ ղեկոյցը:

Հարց 13.— 29-րդ Պատգ. Ժողովէն յառաջացած Հա-

շուեքնիչ Յանձնախումբի հաշուեյարդարը.—

Քսանեւիններորդ Պատգ. Ժողովը ստեղծած էր Հաշուեքնիչ Յանձնախումբ մը՝ Ընկերութեանց 1918—1932 շրջանի հաշիւները վերաքննելու համար, վկայեալ հաշուակալներու առաջնորդութեամբ: Յանձնախումբը իր տեղեկագիրը պատրաստելով ներկայացուցած էր 30-րդ Պատգ. Ժողովին, եւ հոն հաղորդած էր մի քանի գումարներու անստուգութեան մասին, որոնց ստուգումը տակաւին ժամանակի կը կարօտէր, որուն համար 30-րդ Պատգ. Ժողովը դարձեալ լիազօրած էր զիրենք, որպէս զի շարունակէին իրենց աշխատանքը մինչեւ որ չլուրացուած գումարները եւս ստուգուէին:

Յանձնախումբի անդամներէն Պր. Ռուբէն Պարմադեան կարդաց հաշուետուութեան այդ յաւելուածական մասը որ ղեկավարուած էր տեղեկագրին մէջ, նաեւ բերանացի որոշ տեղեկութիւններ հաղորդեց իրենց աշխատանքներուն մասին: Պատասխանեց իրեն ուղղեալ բոլոր հարցումներուն: Հարցերու առանցքը կը կազմէր Յանձնախումբի անդամներէն Ալեքսան Բէքէվեանի բռնած ընթացքը հանդէպ Ընկերութեան եւ Յանձնախումբի անդամներուն:

Պատգամաւորներ ուղեցին գիտնալ թէ սոյն անհատը իր հրաժարականը պաշտօնապէս տուած էր հոն ուր որ պէտք էր, թէ ոչ: Յանձնախումբին կողմէ տրուած ղեկոյցէն յայտնի եղաւ որ յիշեալ Ա. Բէքէվեան հակաօրինական ընթացքով ինքզինքը դուրս թողուցած է Յանձնախումբի կազմէն, եւ հակառակ Կեդր. Վարչութեան սաստումներուն, կրկին դուրս եկած է մամուլի միջոցաւ

քննադատելու հաշուեքննութեան աշխատանքները, կասկածի ենթարկելու այդ հաշիւներու բացարձակ ճշտութիւնը, հակառակ անոր որ իր իսկ ստորագրութեամբ անոնց ճշտութիւնը վաւերացուած էր :

Ժողովը նկատի ունենալով սոյն հայրենակցի խափանարար եւ պառակտիչ ընթացքը, նոյնպէս անճիշտ դռնելով իր հաղորդած հաշուական տեղեկութիւնները մամուլին մէջ, խտրել կը դատապարտէ անոր այդ անպատշաճ դիրքը Ընկերութեան հանդէպ, եւ նոյն ատեն հետացուած կը նկատէ Ընկերութեան շարքերէն :

Այս հարցին յարակից Ժողովս նկատի ունենալով նախկին Կեդր. Վարչութեան գործօն եւ զոհաբերող անդամներէն Պրնք. Աստուր Աղմէլեանի եւ Խոսրով Պոնափարթեանի, ինչպէս նաեւ նախկին ներկայացուցիչ Մկրտիչ Արսլանեանի անխղճօրէն քննադատուած ըլլալը կարգ մը հայրենակիցներու կողմէն իրենց հաշուակալական եւ այլ գործունէութեանց համար, որոնք յաւէտ թշնամական եւ անհատական բնոյթ կրած ըլլալու են, Ժողովս խտրել կը դատապարտէ այդ կարգի զբաղարտութիւնները եւ անոնց հեղինակները : Ժողովը ի սրտէ գնահատելով Աղմէլեանի, Պոնափարթեանի եւ Արսլանեանի Ընկերութեան մատուցած նիւթական եւ բարոյական զոհաբերութիւնները, կը ցանկայ որպէս զի անոնք անյիշաչար ոգւով դարձեալ շինարարական աշխատանքի թուին Ընկերութեան կողքին :

31-րդ Պատգ. Ժողովը Հաշուեքննիչ Յանձնախումբի աշխատանքներու լրիւ կատարումը զեկուցադրի յաւելուածական մասով գտաւ խիստ գոհացուցիչ, եւ միաձայնութեամբ իր գնահատանքին ինչպէս նաեւ շնորհակալութեանց արժանի կը տեսնէ Յանձնախումբի երկու անդամները՝ Պրնք. Ռուբէն Պարմազեան եւ Իսրայէլ Տ. Յովհաննէսեան, որոնք աւելի քան մէկ տարուան զժողովին աշխատանքէ յետոյ, կրցին վերջապէս ի կատար հանել իրենց վրայ դրուած պարտականութիւնը, վերջ տալով ցաւոտ հարցին, որ կը սպառնար Ընկերութեան քայքայման սրատճառ դառնալու :

Հարց 14.— Ներկայացուցչի Հարց.— Ժողովը որոշեց նորընտիր Կեդր. Վարչութեան միջոցաւ դիմել Նոր Մալաթիոյ Շին-Յանձնախումբին, որպէս զի անոնք տեղւոյն վրայ պաշտօնապէս մէկը կարգեն իրրեւ ներկայացուցիչ, կապ պահելու Կեդր. Վարչութեան հետ եւ լուսաբանելու Նոր Մալաթիոյ վերաբերեալ խնդիրները :

Հարց 15.— Մամուլի Զեկոյց.— Ժողովը պարտք դրաւ նորընտիր Կեդր. Վարչութեան վրայ, Պատգ. Ժողովներէ ետք մամուլին յանձնել տեղեկագիր մը, պատկերացնելով Ընկերութեան տարուան մը ձեռք բերած արդիւնքները, նիւթական հաշուեկշիւով միասին :

Հարց 16.— 32-րդ Պատգ. Ժողովի վայրը.— Որոշուեցաւ 32-րդ Պատգ. Ժողովը գումարել Ուստրի մէջ :

Հարց 17.— Անդամատուրքերու նուազեցում.— Այս հարցը միաձայնութեամբ մերժուեցաւ :

Հարց 18.— Ներգաղթ.— Ժողովը յառաջիկայ տարուան համար նշանակեց 5,000 տոլարի պիւտճէ, ի նպաստ ներգաղթի դէպի Նոր Մալաթիա, եւ անոր յարակից բնակարանաշինութեան : Հետեւեալ նուազագոյն դօթան նշանակուեցաւ Մ.Տիւղերու համար .—

Քլիվլէնտ քոյր Մ.Տիւղեր	\$500.00
Ֆիլատէլֆիա քոյր Մ.Տիւղեր	400.00
Ուստր քոյր Մ.Տիւղեր	300.00
Պոսթոն քոյր Մ.Տիւղեր	200.00
Նիւ Շորք-քոյր Մ.Տիւղեր	250.00
Փրալիտէնս քոյր Մ.Տիւղեր	200.00
Տիթրոյթ Արանց Մ.Տիւղ	100.00
Վոքէկրն Արանց Մ.Տիւղ	100.00
Ֆրէշոն Արանց Մ.Տիւղ	100.00
Հէյլիհիլ Սառն Մ.Տիւղ	75.00
Լօս Անճէլլոս Արանց Մ.Տիւղ	50.00
Ֆիլադելֆիա Արանց Մ.Տիւղ	50.00
Հալէպ Արանց Մ.Տիւղ	50.00
Պէյրութ Արանց Մ.Տիւղ	25.00
Երուսաղէմ Արանց Մ.Տիւղ	10.00
Ֆրանսայի չրջանակ	10,000 Փրանք

Չորրորդ նիստը փակուեցաւ ժամը 2-ին մէկ ժամ ճաշի ժամանակ տալու պայմանաւ :

ՆԻՍ Ն .

Հինգերորդ նիստը բացուեցաւ Երկուշաբթի (Սեպտ. 3) կէսօրէ ետք ժամը 3-ին : Ներկայ էին բոլոր պատգամաւորները բաց ի Նիւ Եորքի Արանց Մ. Ճիւղի պատգամաւորէն : Նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով վաւերացուեցաւ :

Հարց 19. — Մալաթիացի Կարօտեալներու օգնել . —

Այս առթիւ որոշուեցաւ հիմնուել եւ հետեւողական ըլլալ նախկին Պատգ. Ժողովներու այս մասին տուած որոշումներուն :

Հարց 20. — Պատժական միջոց հանդէպ խափանաբարներու . — Ժողովը նկատի ունենալով անցնող տարուան վերջին ամիսներուն մասնաւորապէս մամուլի մէջ երեւցող անպատշաճ, դուբիւզ եւ զրպարտիչ լեզուներով գրուած չարախօսութիւններ՝ Ընկերութեանս վերաբերեալ ներքին խնդիրներու շուրջ, ընդունեց հետեւեալ բանաձեւը միաձայնութեամբ . —

«Այն բոլոր անհատները որոնք Կրթասիրացի անդամ ըլլալով մէկտեղ դէմ են Կրթասիրաց Ընկերութեան հետապնդած վերաշինական ծրագիրներուն Նոր Մալաթիոյ նկատմամբ, եւ կը փորձեն հրապարակային զրպարտութիւններով վարկաբեկել Ընկերութիւնս, եւ անոր պաշտօնական մարմինները, այդպիսիներու հանդէպ կիրարկելէ ետք կանոնադրային պատժական տրամադրութիւնները, զրկել անդամակցութենէ վճարելով Ընկերութեանս չարքերէն դուրս :

Հարց 21. — Տէր Ստեփան Պէննէեամի Գիրքը . — Մալաթիացի քահանային տարադրութեան առթիւ պատրաստած ձեռագիրը տպագրութեան համար յանձնարարուած Հ. Պէրպլեանի կողմէ, որոշուեցաւ յանձնել Կեդր. Վարչութեան՝ քննութեան համար, եւ թողուլ անոնց դատողութեան հրատարակման հարցը, եթէ երբեք յարմար կը դատեն :

Հարց 22. — Ուսանողներու հարց . — Նկատի ունենալով որ Ընկերութիւնը յառաջիկայ շրջանին ծանրաբեռնուած պիտի ըլլայ ներգաղթի հարցով եւ անոր յարակից շինարարութեամբ, կը յանձնարարէ Կեդր. Վարչութեան հետեւողական ըլլալ նախկին Պատգ. Ժողովներու որոշման :

Հարց 23. — Կեդրոնի վայրը . — Եօթներորդ հարցի որոշման երկրորդ պարբերութեան յարակից ժողովը միաձայնութեամբ որոշեց դարձեալ Կեդրոնը պահել Քլիվլէնտի մէջ :

Հարց 24. — Նիւ Եորքի տան խնամակալութիւն . — Ընկերութեանս Նիւ Եորքի մէջ ունեցած շէնքի հոգատարութեան համար ընտրուեցան հետեւեալ երեք հայրենակիցները իբրեւ խնամակալութիւն . — Պրնք. Մարգար Մարգարեան, Յակոբ Ուրլիեան եւ Տօնապետ Տօնապետեան : Յաջորդ առաւելագոյն քուէ չահողներ եղան Գր. Գարուսուզեան եւ Մ. Զուլալեան :

Հարց 25. — Կեդր. Վարչութեան ընտրութիւն . — Կեդր. Վարչութեան ընտրութիւնը տեղի ունեցաւ գաղտնի քուէարկութեամբ, Քլիվլէնտի Մ. Ճիւղի ներկայացուցած եռապատիկ ցանկի վրայէն եւ տուաւ հետեւեալ արդիւնքը .

Լ. ԹԵՐՈՒԱՆԵԱՆ	37 քուէ
Գ. ԱՍԼԱՆԵԱՆ	33 »
Խ. ՈՍԿԵՐԻԶԵԱՆ	29 »
Վ. Տ. ԴԱԻԹԵԱՆ	29 »
Գ. Տ. ԳԵՈՐԳԵԱՆ	29 »
Յ. ԵԱՂՈՒՊԵԱՆ	28 »
Գ. ԵՐԱՆԵԱՆ	28 »

Յաջորդ առաւելագոյն քուէ չահողները եղան իբրեւ փոխ անդամ . — Յ. Ափալազեան 13 քուէ, Գ. Օտապալեան 11 քուէ, եւ Մ. Մարտիկեան 10 քուէ :

ՏԵՐՈՒՆԻ

Պատգ. Ժողովը ցաւով կ'արձանագրէ հետեւեալ մահացող հայրենակիցներու անունները տարուան ընթացքին, միխթարութիւն ցանկալով իրենց տարագաններուն .



Քլիվլենտին Սարգիս Տ. Դաւիթեան, Մարիամ Պ. Թերխանեան, Կարապետ Զէքէմեան, Գրիգոր Տէլիքէշեան :

Ուստիւն Կարապետ Կէղիւրեան, Թորոս Մարգարեան, Պողոս Թերխանեան, Ռոզի Սահակեան :

Ֆիլատելփիայէն Սերոբ Եսայեան, Յակոբ Քիլիւրեան, փոքրիկ ձորճ Մազմանեան :

Նիւ Եորքէն Յովհաննէս Աճէմեան, Աւետիս Սուքիասեան, Կարապետ Աւետիսեան, Աւետիս Գըրպըրգեան :

Տիքրոյք. — Տիկին Ալաչաեան

Շիֆալօ. — Աւետիս Պօյաճեան

Լօվէլ. — Գրիգոր Էլիճանեան

Ֆիչպըրկ. — Մարտիրոս Մանուչեան

Վոքսթաուն. — Աբրահամեան

Նիւպրիփորք. — Իսքէնտէր Անանեան

Սաքրամենթօ. — Գրիգոր Թադէոսեան

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Փրավիտէնսի Տիկնանց Մ. ճիւղը Սեպտ. 2-ի երեկոյին, ի սրատիւ պատգամաւորներու եւ հանդիսականներու թէյասեղան մը սարքած էր : Ներկայ էին 200-է աւելի հայրենակիցներ եւ հիւրեր որոնք բոլորուեցան զարգարուն սեղաններու շուրջ, ստեղծելով մտերմական զուարթ մթնոլորտ մը :

Երեկոյթին կ'ատենապետէր Պր. Ն. Կանանեան, որ բացման հակիրճ խօսքերէ ետք հրաւիրեց Պր. Յ. Եաղուպեանը, Կեդր. Վարչութեան ատենապետը, նախագահելու երեկոյթին :

Օր. Մարթա Էլիճանեան պատգամաւորներուն եւ ներկաներուն ուղղեալ բարի գալուստի գրաւոր ուղերձ մը կարդաց շատ գեղեցիկ կերպով պատրաստուած, որ խանդավառ ծափերով ողջունուեցաւ : Կարգաւ խօսք առին Պրնք. Ք. Օտապաչեան՝ Քլիվլենտի Մ. ճիւղէն, Գ. Տ. Գէորգեան եւ Լ. Թերխանեան՝ Կեդր. Վարչութեան կողմէ, Ա. Գ. Աւետիսեան, Ռ. Պարմազեան, Յ. Ս.

Պանդեան եւ Յ. Փիլիպոսեան՝ Ֆրանսայի եւ Ամերիկայի Մասնաճիւղերուն կողմէ :

Պօսողներ դրուատիքն ըրին անցնող տարեշրջանին Ընկերութեան ձեռք բերած յաջողութիւններու առթիւ, շնորհիւ Մասնաճիւղերու ներդաշնակ եւ խանդավառ գործունէութեան, որով անոնք գերակատարած էին Նոր Մալաթիոյ ջուրի քէմբէյնին համար իրենց տրուած գօթաները :

Մէջ ընդ մէջ եղան արտասանութիւններ եւ երգեր : Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին Պր. Հ. Օրմանեան՝ մեներգով, փոքրիկ Կէղիւրեան քոյրեր՝ երգով ու պարով, Պարբութեան եւ Ճիզմէճեան փոքրիկներ իրենց խմբերգով : Պր. Ս. Թիւթիւնճեան (Պոսթոնէն) իր հարմոնիքայով, իսկ Հէյվըհիլէն ներկայ եղող հայրենակիցներու խումբը իրենց Ս. Հայաստանի նոր երգերով երաժշտական անակնկալ վայելք մը տուին ներկաներուն :

Ընկերական բարձր տրամադրութիւններու սոյն մթնոլորտին մէջ բացուեցաւ հանդանակութիւն մը ի նըպաստ Կրթասիրացի հետապնդած նպատակներուն, եւ կարճ ժամանակէն կամաւոր նուէրներով զոյացաւ հարկւր տասնեւկէց (§116) տոլար : Ուշ ատեն երեկոյթը փակուեցաւ Պր. Յ. Եաղուպեանի զնահատանքի խօսքերով ցոյց տրուած ոգեւորութեան առթիւ :

ՓԱԿՈՒՄ

Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան 31-րդ Պատգ. Ժողովը երկու-քուկէս օր տեւող հինգ ներդաշնակ ու խանդավառ նիստերով վերջնահատութեան ենթարկեց Ընկերութեան բոլորած ամենայաջող տարեշրջաններէն մին, եւ ըստ այնմ լուծեց օրակարգի վրայ եղող 25 հարցերը՝ առաջնորդուած Ընկերութեան ընդգրկած հիմնական եւ չինարար սկզբունքներով :

Վերջին նիստի արձանագրութիւնը, ինչպէս նաեւ բուհարկուած կարեւոր բանաձեւերը կրկին անգամ կարգացուելով միաձայնութեամբ վաւերացուեցան :

Փրավիտէնսի Արանց Մ. ճիւղին կողմէ իրրեւ մըցանակ Պատգ. Ժողովին տրամադրուած մետաքսեայ դունազեղ ձեռագործ ծածկոցը, գիւանին կողմէ նուէր տրուեցաւ Վոքէկընի նորակազմ Մ. ճիւղին՝ առ ի վարձատրութիւն անոնց զոհաբերութեան:

Իսկ արծաթեայ պատուոյ բաժակը որ կը մնար Քլիվլէնտի Արանց Մ. ճիւղին մօտ, որոշուեցաւ ձօնել Տիթրոյթի Մ. ճիւղին, իրրեւ իրենց դօթան գերակատարող Մ. ճիւղ: Սոյն որոշումները ծափերով ողջունուեցան պատգամաւորներէն:

Դիւանը յանձին իր Ատենապետին՝ պատգամաւորներու կողմէ հաւաքարար իր գնահատանքն ու շնորհակալութիւնները յայտնեց Փրավիտէնսի քոյր Մասնաճիւղերուն՝ անոնց ընծայած աննման հիւրասիրութեան եւ ընկերական զոհաբերութեան համար: Ժողովի ամբողջ տեւողութեան Փրավիտէնսի հայրենակիցները ասպնջականօրէն պատուեցին պատգամաւորները թէ հիւրերը իրենց ճոխ սեղաններով:

Մասնաւոր գնահատանքի արժանի են Պրնք. Ս. Զիգմէճեան եւ Ա. Էլիճանեան՝ իրենց սիրայօժար սպասարկութեան եւ ծառայութեան համար ճաշի եւ թէյասեղանի միջոցին:

Խ. Հայաստանի զուարթ նոր երգերով Ժողովը փափուեցաւ Երկուշաբթի իրիկուն (Սեպտ. 3) ժամը 7.30-ին:

Ի Դիւնաց Մալաթիոյ Կրթ. Ընկերութեան
31-րդ Պատգ. Ժողովի

Ատենադպիր Ատենապետ
Յ. Ս. ԽԱՆՅԵԱՆ Ս. ՄԱՆՈՒՇԵԱՆ

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1933 Սեպտ. 1—1934 Սեպտ. 1

Մուտքի հաշիւ վերաշինացի	
Քլիվլէնտի Արանց Մ. ճիւղէ	\$ 353.38
Քլիվլէնտի Տիկնանց Մ. ճիւղէ	418.38
Տիթրոյթի Մ. ճիւղէ	200.00
Հէյլըհիլի խառն Մ. ճիւղէ	50.00
Փրավիտէնսի Արանց Մ. ճիւղէ	100.00
Փրավիտէնսի Տիկնանց Մ. ճիւղէ	100.00
Պէյրութի Մ. ճիւղէն	190.00
Վօքէկընի Մ. ճիւղէ	115.00
Հալէպի հայրենակիցներէ	27.00
Նիւ Եորքի Արանց Մ. ճիւղէ	130.50
Նիւ Եորքի Տիկնանց Մ. ճիւղէ	130.50
Ուստրի Տիկնանց Մ. ճիւղէ	163.75
Ուստրի Արանց Մ. ճիւղէ	83.00
Մարսէյլի Մ. ճիւղէ	26.00
Ֆրանսոյի շրջանի ներգաղթի յանձնախումբէ	88.00
Ֆիլատէլֆիոյ (Բ) Տիկ. Մ. ճիւղէ	235.00
Պոսթոնի Տիկնանց Մ. ճիւղէ	50.00
Ֆիլատէլֆիոյ (Բ) Արանց Մ. ճիւղէ	235.00
Երուսաղէմի Մ. ճիւղէ	8.75
Ֆրէզնոյի Մ. ճիւղէ	100.00
A Rosenbirg	5.00
Wm. Sirifman	10.00
Յովհ. Աճէմեանի փոխան ծաղկեպսակի (Նիւ Եորք)	63.00
Թորոս Մարգարեանի փոխան ծաղ.պսակի (Ուստր)	77.00
Սարգիս Տ. Դաւիթեանի փոխան ծաղ. (Քլիվլէնտ)	62.50

Ընդհ. գումար վերաշինացի 3021.76

Ելքի հաշիւ վերաշինացի	
Նոր Մալաթիոյ օթոթըրըքի մը համար	921.26
Նոր Մալաթիոյ ջուրի խողովակներ գնելու համար.	5000.00

Ընդհ. Ելք վերաշինացի 5921.26

Վերաշինացի Ընդհ. Մուտքի գումար	3021.76
Կրթասիրացի Ընդհ. Մուտքի գումար	8411.50

Վերաշ. եւ Կրթ. Ընդհ. Մուտքի գումար	11433.26
Նախկին Կերդ. Վարչ.էն նորին փոխանցուած	4585.49

Ընդհ. գումար	16018.75
Ընդհ. Ելք վերաշինացի եւ Կրթասիրացի	13753.72

Գանձը պատրաստի դրամ	2265.03
Ընկերութեանս դրամները կը մնան հետեւեալ տեղերը	
1934 Օգոստ.	
Cleveland Trust Co.ի մէջ	1440.15
Bank of Clevelandի մէջ	225.00
U. S. Bank New Yorkի մէջ	242.98
Ֆրանսայի Ներգաղթի Գործ. Մամնոյն քով	357.00
	2265.13

Սոյն հաշուեկշիռը վաւերացուած է :

Մուտքի հաշիւ կրթասիրացի

Քլիվլէնտի Արանց Մասնահիւղէ	112.00
Քլիվլէնտի Տիկնանց Մ.ճիւղէ	35.00
Վ.օքէկընի Մ.ճիւղէ	10.00
Ուստրի Տիկնանց Մ.ճիւղէ	16.00
Ուստրի Արանց Մ.ճիւղէ	27.00
Տիթրոյթի Մ.ճիւղէ	30.00

Նիւ Եորքի Տիկնանց Մ.ճիւղէ	18.00
Փրավիտէնսի Տիկնանց Մ.ճիւղէ	18.00
Փրավիտէնսի Արանց Մ.ճիւղէ	32.00

Ընդհ. գումար անդամատուրքերէ	298.00
Նիւ Եորքի չէնքի եւ խանութներու վարձքերէ	8113.50

Ընդհ. Մուտք անդամատուրքերէ եւ տան վարձքերէ	8411.50
---	---------

Ելքի հաշիւ կրթասիրացի

Կեդրոնական Վարչութեան դիւանի ծախսեր	301.86
Կեդր. Վարչութեան Քարտուղարութեան	62.50
Ուսանողի	100.00
Կարօտեալներու որպէս նպաստ ղրկուած 1918—1932-ի հաշուեքնութեան գրքոյկներու տարագրութեան եւ առկախ մնացած	115.00
Նիւ Եորքի չէնքի ալլ եւ ալլ նորոգութեանց	638.57
Նիւ Եորքի չէնքի ածուխի	1002.51
Նիւ Եորքի չէնքի ջուրի պիլ	196.60
Նիւ Եորքի չէնքի թէքս	808.75
Նիւ Եորքի չէնքի մէկ տարուան մօրթկէյճ	1000.00
Ն. Ե. չէնքի մէկ տարուան մօրթկէյճի տոկոս	2325.00
Նիւ Եորքի չէնքի Խնամակալութեան	233.00
Նիւ Եորքի չէնքի ջուրի թէքս	788.80
Ն. Ե. չէնքի ապահովագրութեան (լայպլիթի)	184.87

Ընդհ. Ելք Կրթասիրացի	7832.46
----------------------	---------

Ընդհ. Ելք վերաշինացի	5921.26
----------------------	---------

Ընդհ. գումար Վերշ. եւ Կրթ.	13,753.72
----------------------------	-----------

Նիւ Եորքի չէնքի Ընդհ. Մուտք	8113.50
Նիւ Եորքի չէնքի Ընդհ. Ելք	7185.17

Մէկ տարուան ընդհ. հասոյթ Ն. Ե. չէնքէն 928.33
 Մէկ տարուան անդամատուրքերէ 298.00

Ընդհ. գումար 1226.33
 Կեդր. վարչութեան դիւանի, ուսանողի նպաստ
 Եւայլն ծախսեր Կրթասիրացի 674.36
 551.97
 Մէկ տարուան վերաշինացի Մուտք 3048.76
 Մէկ տարուան վերաշինացի Ելք 5921.26

ՄԱՂԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
 Ատենապետ՝ Յ. Թ. ԵԱՂՈՒՊԵԱՆ
 Ատենադպիր՝ Լ. Մ. ԹԵՐԽԱՆԵԱՆ
 Գանձապահ՝ Խ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Պատգամաւորական Ժողովի մէջ հաւաքուած դրամները,
 սոյն գումարները 1933—1934-ի հաշուոյն

Ուստրի Արանց Մ. ճիւղ, ի հաշիւ վերաշինացի 100.00
 Ուստրի Արանց Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթասիրացի 27.00
 Նիւ Եօրքի Արանց Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթասիրացի 25.00
 Ֆիլիպոսի Արանց Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթասիրացի 15.00
 Հէյլհիլի Մ. ճիւղ, ի հաշիւ վերաշինացի 50.00
 Հէյլհիլի խառն Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթասիրացի 20.00
 Երուսաղէմի Մ. ճիւղ, ի հաշիւ վերաշինացի 2.50
 Ֆիլատէլֆիոյ Տիկն. Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթ. 25.00
 Ֆիլատէլֆիոյ Արանց Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթ. 48.00
 Պոսթոնի Տիկն. Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթասիրացի 9.47
 Պոսթոնի Տիկն. Մ. ճիւղ, ի հաշիւ վերաշինացի 46.99
 Պոսթոնի Արանց Մ. ճիւղ, ի հաշիւ Կրթասիրացի 15.00
 Մարսէյի Մ. ճիւղ, ի հաշիւ վերաշինացի 59.66
 (Կնիք)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ՄԼԹ. ԿՐԹ. ԸՆԿ.ԹԵԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ
 ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆՈՅ

1933 Յուլիս—1934 Օգոստոս

ՄՈՒՏՔ

Նախորդ շրջանի Մնտուկի պատրաստ գումարը 10060.15
 Վալանսի Արանց Մ. ճիւղի 1934 շրջ. փոխանցումը 2318.50
 Վալանսի Տիկնանց » » » » 2380.80
 Վիէնի Երկսեռ » » » » 2320.35
 Լիօնի Արանց » » » » 2300.40
 Սէն Շամօնի Արանց » » » » 2555
 Ռօմանի Արանց » » » » 1613.20
 Ռօմանի Տիկնանց » » » » 900
 Պօլէնի Արանց » » » » 140.50
 Բարիլի Մ. ճիւղէն միայն ջրի վիճակ. թեան հաշ. 380
 Մարսէյի » » » » 635
 Պէյրուի » » » » 297.60
 Երուսաղէմի » » » » 149.50
 Հալէպի » » » » 19.25
 Տոկոս (1933 Հոկտ.—1934 Յուլ.) 41.30

Ընդհ. Գումար 26111.15

Կշիռ, հին հաշիւէն, սնտուկը պատրաստ գումարը 16162.70
 Պահանջ. 2-րդ շրջ. Ժողովի պատգամաւորներէ 300
 ԵԼՔ

Կապոցներու առաքման փոսթի եւ նամակադրոշմ 131
 Տպագրական թուղթ եւ պահարան 110
 Մարդահամարի եւ ջրի վիճ. թեան տոմս. տպագր. 160
 Գրեական զանազանուց 45.50
 Ճանապարհածախս Մ. ճիւղերու այցելութեան 169
 Նոր Մլթ. զրկուած 25,000 ասեղներու փոխարժէք 6262.45

Նոր Մլթ. ղրկուած 25,000 ասեղ ասահովագրողէք 75-50
 Զուրի վիճ.թեան չահող թիւերու վճ. ընդ. գումար 2670
 Զուրի վճ.թեան առթիւ սրահի վարձք 25
 Պր. Ս. Քէլաշեանի ի հաշիւ 2-րդ շրջ ժող. սպառք. 300

9948-45
 16162-70

Կշիւ, ի նոր հաշիւ 26111-15

Սոյն հաշուեկշիւը մայր հաշիւին հա-
 մապատասխան ըլլալը կը հաստատենք

Մլթ. ԿՐԹ. ԸՆԿ.ԹԵԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋ.
 ԳՈՐԾ. ՄԱՐՄՆՈՅ
 Նախագահ՝ Թ. ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ
 Քարտուղար՝ Խ. ՈՐԲԵՐԵԱՆ
 Գանձապահ՝ Թ. Ս. ԿԷԶԻՒՐԵԱՆ
 (Կնիք)

ԶԵԿՈՅՑ ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կարդացուած
 31-րդ Պատգ. Ժողովին մէջ, ի Փրավիտէնս, Սեպ. 1, 1934

Սիրելի Հայրենակիցներ,
 Կեդրոնական Վարչութիւնս սրտի անհուն ուրախու-
 թեամբ կ'ողջունէ 31-րդ Պատգ. Ժողովի գումարումը՝
 որ այսօր հոս տեղի կ'ունենայ: Նախորդ ժողովէն ասդին
 բոլորած ենք մէկ տարուան շրջան մը որ իր դարկան եւ
 բարոյական արդիւնքներով Կրթասիրացի պատմութեան
 մէջ իր յիշատակելի տեղը պիտի գրաւէ: Հայրենիքի կա-
 բոտովը եւ ազգային մարքուր գաղափարականովը լեցուն
 ի մի կուգանք հոս, այս ժողովատեղին, լսելու եւ խոր-
 հըրդակցելու կատարուած գործերու եւ իրականութեանց
 մասին, որոնք տեղի ունեցան այս վերջացող տարուան
 շրջանին:

Մարաթիացիներու համար մեծ պատիւ մը կը համա-
 րենք որ եղբայրական գործակցութեամբ համախմբուած
 Կրթասիրացի շուրջ, մէկ հոգւով եւ մէկ սրտով լծուած
 ենք շինարար եւ ստեղծագործող աշխատանքի մեր Հայ-
 րենիքի՝ վերածնող Հայաստանի վերելքի նուիրական
 գործին մէջ: Հաւաքական սոյն ընդհանուր մեր ջանքերը,
 որոնք անհուն զոհաբերութեամբ ձեռք բերուած եւ ի
 սպաս դրուած են Ընկերութեանս վեհ նպատակներուն,
 բացորոշ ապացոյցն է մեր տոհմային մարքուր նկարագրին
 եւ ազգային նախանձախնդրութեան հարադատ ոգիին,
 որոնք աւանդ տրուած են մեզ դարերէ ասդին մեր նախա-
 հայրերէն: Հայրենասիրական այս նուիրական իտէալը՝
 եւ ազգային ծառայութեան այս ճշմարիտ ոգին՝ նշանա-
 բան ունենալով եւ մեզ համար սրբազան պարտականու-
 թիւն համարելով՝ աշխատելու ենք անոնց չարունակու-
 թեան եւ յաւերժացման: Որդեգրենք եւ վառ պահենք դա-
 նոնք իրագործելու մեր հետապնդած օգտակար ծրագիր-
 ները եւ բարի նպատակները:

Նախ քան յիշելու եւ խօսելու ձեռք բերուած արդիւնքներու մասին, կոչ կ'ընենք ձեզ վեր բռնել եւ գերադասել Կրթասիրացի ընդհանուր շահերը ոեւէ անձնական նկատումներէ: Ձեր քննադատութիւններու մէջ ըլլալ անաչառ եւ անկեղծ: Այս կը պահանջէ նկարագրի տէր մարդոց ազնուութիւնը, այս է ճշմարիտ հայրենասէրի մը պարտքը:

Կեդր. Վարչութիւնն քաջալերուած Մասնաճիւղերու եւ անդամներու միահամուռ ժրջան գործունէութենէն, ներշնչուած իր վրայ դրուած անվերապահ վստահութենէն եւ նպատակ ունենալով մի-միայն Ընկերութեանս օգտակար հանդիսանալու անկեղծ դադարիարը, աշխատած եւ գործած է այս շրջանին համերաշխ եւ ներդաշնակ կերպով ծառայել եւ գործադրել Կրթասիրացի մշակած ծրագիրները:

Հոս կուգանք համեստօրէն յայտնելու ձեզ որ մեր վրայ դրուած պարտականութիւնները կատարած ենք խղճմտօրէն, հայրենասիրական անկեղծ եւ ճշմարիտ ոգիով: Մեր գործերը վարած ենք մեր կարողութեան սահմաններու մէջ անհասարկօրէն եւ անաչառ կերպով՝ հեռու անհատական եւ հատուածական նկատումներէ ու զգացումներէ:

Մեր չըջարեւականներով իրենց ատենին արդէն բաւականաչափ կերպով տեղեկացուցած ենք ձեզ Ընկերութեանս գործառնութեանց եւ կատարուած իրականութիւններու մասին: Այսօր հոս յարգոյ պատգամաւորներու կուտանք Կրթասիրացի ընդհանուր գործերու, հաշիւներու եւ աշխատանքներու մանրամասն տեղեկատուութիւնը, յանձնելով ձեր լուրջ ուշադրութեան, անկեղծ խորհուրդին եւ անաչառ դատողութեան:

Կեդր. Վարչութեան կազմը

30-րդ Պատգ. Ժողովէն անմիջապէս յետոյ Կեդր. Վարչութեանս դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

ՅՈՎ. Զ.	ԹԻՐՉԻԵԱՂՈՒՊԵԱՆ	Ատենապետ
ԼԵՒՈՆ	ԹԵՐԻՈՒՆԵԱՆ	Ատենադպիր
ԽՈՍՐՈՎ	ՈՍԿԵՐԻՉԵԱՆ	Գանձապահ

ՅՈՎ. Զ.	ԱՓԱԼԱԳԵԱՆ	Փոխ Ատենապետ
ԳԵՈՐԳ.	ԹՕՓԱԼԵԱՆ	Գարտուղար (վճարեալ)
ԳԵՈՐԳ.	ԱՍԼԱՆԵԱՆ	Խորհրդական
ԳՐԻԳՈՐ	ԵՐԱՆԵԱՆ	Խորհրդական

Գէորգ Թախլեան հինգ ամիսներ գործելէ յետոյ կամովին իր հրաժարման առթիւ, անոր տեղ պաշտօնի կանչեցինք Պր. Գրիգոր Տէր Գէորգեան որպէս անդամ Կեդր. Վարչութեան, որ ստացած էր յաջորդ առաւելագոյն քուէ Պատգ. Ժողովին մէջ: Եւ նկատի ունենալով Կեդր. Վարչութեանս ծանր աշխատանքները՝ մեր կողմէ հրաւիրեցինք Պր. Վահան Տէր Դաւիթեան որ սիրալոյսով իր գործակցութիւնն ու աջակցութիւնը բերաւ մեզ՝ քարտուղարական եւ այլ գործերու մէջ առանց նիւթական ոեւէ ակնկալութեան:

Ձուրի կարգադրութեան շուրջ

Ընկերութեանս այս տարուան շրջանի ամենակենսական հարցն էր ջուրի քէմբէյնի հանդանակութեան հարցը եւ անոր վերջնական լուծումը: Հանդանակութեան քէմբէյնը երջանկութեամբ ու պարծանքով կը յայտնենք որ մեծ յաջողութիւն մը եղաւ շնորհիւ Մասնաճիւղերու մեծամասնութեան ժրջան ջանքերուն եւ անոնց ցուցադրած պարտաճանաչ գիտակցութեան ազնիւ ոգիին: Ինչպէս մեր վերջին շրջաբերականով տեղեկացուցած ենք ձեզ՝ հինգ Հայրենակցական Միութիւններու մասնակցութեամբ տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով մը Երեւանի մէջ, որուն նախագահն է Հօկ-ի Գլխաւոր Վարչութեան Նախագահ քաղաքացի Գրիգոր Վարդանեան եւ ուր որոշում գոյացած է՝ տրամադրել տասնեւից հազար տոլար՝ ջուրի խողովակներու գնման անհրաժեշտ ծախքերու համար: Սոյն ծախքերու ամբողջական գումարէն մեզ բաժին հանուած է հինգ հազար տոլար: Քաղաքացի Գրիգոր Վարդանեանի իր վերջին նամակի հրահանգին համաձայն՝ մեզ բաժին հանուած հինգ հազար տոլարը, որ կ'ընէ 15,000 Փրանք, հեռագրով զրկեցինք Փարիզ, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնը,

ուր պիտի կեդրոնանան ջուրի խողովակներու ծախսերու ամբողջական գումարը: Այս ուրախառիթ լուրը ձեզ տալով՝ վերջացած կը համարենք ջուրի դժուարին հարցի վերջնական կարգադրութիւնը: Խողովակներու պեղման եւ տեղաւորման զանազան բոլոր միւս ծախսերը պիտի հոգայ Հայաստանի մեր բարերար Կառավարութիւնը, որ կ'ընէ մօտաւորապէս հարիւր հազար ռուբլի:

Ջուրի հանգանակութեան առթիւ կ'ուզենք մի քանի խօսք ըսել Մ. ճիւղերու մասին որոնք իրենց մասնակցութիւնը բերին եւ պարտականութեան բաժինը կատարեցին սոյն կարեւոր գործին մէջ: 30-րդ Պատգ. Ժողովը սկզբունքով ընդունեց զօթայի սիւստեմը կիրարկել ջուրի կարիքներու հանգանակութեան համար: Պատգամաւորներ կամաւոր կերպով որոշ զօթաներ սահմանեցին իրենց Մասնաճիւղերուն, որ առիթ պիտի ընծայէր աղնիւ մըրցում մը ստեղծել քէմբէյնի յաջողութեան համար: (Մանօքութիւն.— Խոստումներու ցանկը եւ իւրաքանչիւր Մասնաճիւղի հանգանակած գումարը տես հաշուեկշիռին մէջ) որմէ պիտի տեսնուի թէ ո՞ր Մասնաճիւղերը կատարած են իրենց պարտականութեան բաժինը, որո՞նք զերազանցած են իրենց խոստումները եւ որո՞նք մնացած են անպարտաճանաչ սոյն յոյժ կարեւոր ձեռնարկին մէջ:

Ֆրանսայի շրջանի Մասնաճիւղերուն համար, իբրեւ զօթաբաժին հանուեցաւ 15,000 Փրանք, որուն գործունէութիւնը եւ ջուրի հանգանակութեան խոստումներու բաժանումը ձգուեցաւ Ներգաղթի Յանձնախումբին: Մեր զեկոյցէն յետոյ, պիտի կարգացուի Ֆրանսայի շրջանային վարչութեան զեկոյցը, որմէ յարգոյ պատգամաւորներ պիտի տեղեկանան հոն տեղի ունեցած գործունէութեան եւ մէջտեղ բերուած արդիւնքներու մասին:

Հաշուեկշիռի ցուցակագրութենէն եւ Ֆրանսայի շրջանի զեկոյցէն կը տեսնուի որ Բլիվլէնտի քոյր Մասնաճիւղերը, Տիթրոյթի, Ուստրի, Պէյրութի, Ֆիլատէլֆիոյ Բ. քոյր Մասնաճիւղերը եւ Ֆրանսայի Մասնաճիւղերու մեծամասնութիւնը ցոյց տուած են պարտականութեան գիտակցութիւնը, մէջտեղ բերելով նիւթական մեծ-

կակ գումարներ: Ընդհանուր առմամբ այս շրջանին, բաց ի մի քանի Մասնաճիւղերէ, բոլորն ալ ունեցան գովելի գործունէութիւն մը: Իրենց կարելի ամէն միջոցներով բերին մեզ իրենց սիրայօժար գործակցութիւնը եւ բարոյական ու նիւթական աջակցութիւնը Կրթասիրացի բոլոր օգտակար ձեռնարկներու ու գործերու մէջ: Այս շրջանին հայրենակիցներու սիրտերուն մէջ ստեղծուեցաւ ընդհանուր եւ միահամուռ խանդավառութիւն մը սիրոյ եւ համակրանքի ուժեղ շարժում մը Ընկերութեանս բարի նըպատակներուն եւ ճշմարիտ ուղիին հանդէպ: Բաղում նոր անդամներ աւելցան զանազան Մասնաճիւղերու վրայ: Վերակազմուեցան Վոքէկընի եւ Պօլօնի Մասնաճիւղերը: Բանակցութիւն կատարեցինք վերակազմելու Լօս Անճէլըսի Մ. ճիւղը: Գոյութիւն ունեցող Մ. ճիւղեր աւելի եռանդով լծուեցան շինարար աշխատանքի: Սրտի անհուն բերկրանքով կը յիշատակենք եւ կ'ողջունենք սոյն յաջողութիւնները, այն հաստատ համոզմամբ որ կարող պիտի ըլլանք մօտ ապագային իրականացնել Կրթասիրացի ամբողջական կարելի ծրագիրները:

Ասոնք դրական արդիւնքներն են որ ձեզ տեղեկացուցինք: Սակայն կան նաեւ կարգ մը բացասական եւ ցաւալի իրականութիւններ որոնց մասին պարտք կը սեպենք մի քանի խօսք ըսել:

Մեր ստացած տեղեկութեանց համաձայն՝ իրենց խռովարար եւ պարտազանց ընթացքին պատճառաւ մի քանի Մասնաճիւղերէ արտաքսուած են կարգ մը անդամներ՝ Ընկերութեանս շարքերէն: Կեդրոնական Վարչութիւնս բնաւ քաջալերած է այդպիսի քայլեր առնելու, այլ միշտ ջանացած է հրահանգել եւ խրատել որ կարելի ամէն միջոցներով աշխատին գործել եղբայրարար, համերաշխօրէն ու անկեղծ ոգիով՝ Ընկերութեանս օգտակարութեան համար: Կրթասիրացի դուները պէտք է միշտ բաց մնան այն ամէն անդամներուն առջեւ որոնք հաւատարիմ եղած են անոր ծրագիրներուն, գործած չեն կանոնադրի հակառակ ու թերացած չեն իրենց պարտականութեանց մէջ:

Հակառակ մեր թախած կրկնակ ջանքերուն, Թիւատէֆիոյ Տիկնանց Ա. Մասնաճիւղը, Թրէնքիւնի քոյր Մասնաճիւղները եւ Սէյնթ Լուիզի Մասնաճիւղը կը մնան անկազմակերպ: Այդ պատճառաւ անոնք կը գտնուին պարտադանց եւ թերի: Գալով Թիւատէֆիոյ Արանց Ա. Մ. ճիւղին, անիկա կազմուեցաւ այս շրջանի վերջաւորութեան. Կեդրոնական Վարչութիւնս, վաւերացուց զայն գործի լծելու առաջադրութեամբ եւ անոր իրաւասութիւնը ճշտող պարագան կը թողու այս Պատգ. Ժողովի տալիք որոշման:

Թղթակցութիւններու եւ բանակցութիւններու մասին

Այս շրջանին Կեդր. Վարչութիւնս ունեցաւ բազմաթիւ եւ կանոնաւոր թղթակցութիւններ եւ կատարեց կարեւոր բանակցութիւններ Նոր Մալաթիոյ Շին-Յանձնախումբի, Ֆրանսայի շրջանի գործադիր մարմնոյ, Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան Կեդր. Դիւանի, Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տէր Գաբրիէլեանի, Հօկ-ի Գլխաւոր Վարչութեան նախագահ Գրիգոր Վարդանեանի, Հօկ-ի Ամերիկայի շրջանի, Սերաստիոյ, Խարբերդի, Արաբկերի Հայրենակցական Միութիւններու գործադիր վարչութեանց, Ընկերութեանս բոլոր Մասնաճիւղերու եւ բազմաթիւ անհատներու հետ: Գրած ենք 360 նամակներ, 6 շրջաբերականներ, ունեցած ենք 52 վարչական ժողովներ, 3 բացառիկ ժողովներ:

Նիւ Եորքի Տան գործերու մասին

Նիւ Եորքի չէնքի գործերը վարեց 30-րդ Պատգ. Ժողովի կողմէ ընտրուած Յանձնախումբը, որ կազմուած էր Պրնք. Խոսրով Պօնափարթեանէ, Գրիգոր Գափուսուղեանէ եւ Մ. Զուլպիանէ: Պր. Պօնափարթեանի մերժման պատճառաւ իր տեղ նշանակեցինք Պր. Մարգար Մարգարեան: Յանձնախումբը ձեռնհասօրէն վարեց իր գործերը, գանձելով վարձքերը ատենին եւ խնամքով կատարեց հոգատարութեան բոլոր գործերը: Կեդր. Վարչութիւնս գոհունակութեամբ կը գնահատէ մեր Հայրենակիցներու աջնիւ եւ օգտակար գործունէութիւնը:

Ներգաղթի մասին

Ներգաղթի կարեւոր հարցին շուրջ Կեդր. Վարչութիւնս իր կարելին ըրաւ դիմելով պատկան մարմիններու որ իրենց աշխատանքը չինային մղում տալու եւ գոհացուցիչ կերպով կատարելու, փոխադրելով բաւականաչափ Հայրենակիցներ Նոր Մալաթիա: Շին-Յանձնախումբի, Ֆրանսայի Գործադիր Մարմնի եւ Սիւրիոյ Յանձնախումբի համագործակցութեամբ, ներգաղթողներու անուանացանկը ղրկուած է Երեւան, ներգաղթի պատկան մարմնոյն, որ կը խոստանայ յառաջիկային զայն իրականութեան վերածել:

Նոր Մալաթիոյ Մասին

Մեզ հասած պաշտօնական թղթակցութիւններէ կը տեղեկանանք որ Նոր Մալաթիան օր ըստ օրէ կ'ընթանայ դէպի յառաջ: Հոն բնակող Հայրենակիցներ բոլորն ալ լծուած են շինարար աշխատանքի եւ կ'ապրին դոհ ու երջանիկ կեանք մը Հայրենի հողին վրայ: Մեղուաջան աշխատասիրութեամբ սկսուած գործը անոնք յառաջ կը տանին մեծ թափով: Մեր ղրկած օթօ-քրքը գործի դրուած է ու կը գործածուի վերաշինական գործերու մէջ: Շին-Յանձնախումբէն ստացած ենք Նոր Մալաթիոյ մարդահամարի ցանկը որ կը ներկայացնենք ստորեւ:

Տղամարդ	16	տարեկանէն	վեր	60	անձ
Կիներ	16	»	»	58	»
Պատանիներ	16	»	»	40	»
Աղջիկներ	16	»	»	35	»

Ընդհ.

193

Երբեմն այս թիւը կը բարձրանայ մինչեւ 250-ի երբ գործաւորներու կարիքը զգացուի:

Նոր Մալաթիան ունի արհեստանոց մը, կօշիկի եւ գուլպայի արհեստի մթերանոց մը՝ իր առանձին բաժանումներով: Աւանի չէնքերուն թիւն է 22: Ունի արուեստական լիճ մը, այգիներու ջուրի մատակարարման համար: Ճաղարանոց մը եւ զպրոց-մանկապարտէզ:

Նաեւ ներկատուն մը եւ շերամի գործարան մը: Վերոյիշեալ հաստատութիւններէն մեծամասնութիւնը Ընկերութեան սեփականութիւնն ըլլալով 1932 թուականին կ'արժէր 200,048 ռուբլի 81 կոպէկ: Այժմ շահարկութեան միջոցաւ անոնց արժէքը բարձրացած է 209,580 ռուբլի 20 կոպէկի:

Ֆրանսայի շրջանի գործունէութեան մասին

Հոս արժանի է յիշատակել Ֆրանսայի շրջանի Վարչութեան եւ Մասնաճիւղերու մեղուաջան եւ արդիւնաւոր աշխատանքները: Զարդերէ եւ հալածանքներէ մղապաշտ արատուած սոյն մեր հայրենակիցները, Հայրենիքի սէրն ու կարօտը իրենց սիրտերնուն մէջ, կազմ ու պատրաստ կը գտնուին ծառայելու Կրթասիրացի վեհ նպատակներուն համար: Կրթասիրացը յաւէտ երախտապարտ պիտի մնայ բոլոր պարտաճանաչ անհատներու եւ Մ.Ճիւղերու ցուցադրած հայրենասիրական զգացումէն եւ անոնց օգտակար գործունէութենէն: Մեր անկեղծ գնահատանքին արժանի է Ֆրանսայի Ներգաղթի Մարմինը, որ ասեղներու գնման, ջուրի խողովակներու, ներգաղթի, Մ.Ճիւղերու վերակազմութեան եւ այլ կարեւոր գործերու մէջ իրենց գործակցութիւնն ու ծառայութիւնը ընծայեցին մեզ շատ օգտակար եւ գովելի կերպով:

Հանդէս—Պարբերաբերքի մասին

Մեր թիւ 5 շրջաբերականով կոչ ըրած էինք որ Մասնաճիւղեր եւ մասնաւոր անհատներ իրենց գործակցութիւնն ու մասնակցութիւնը բերեն մեզ հանդէս պարբերաթերթ մը հրապարակ բերելու, որուն մէջ պիտի պատրաստուէր Կրթասիրացի պատմութեան նախադիժը եւ Մ.Ճիւղերու ամփոփ կենսագրականը ու նաեւ պիտի տրուէր շահեկան ծանօթութիւններ ու տեղեկութիւններ Ընկերութեան անցեալ ու ներկայ գործունէութեան ու ձեռնարկներու շուրջ: Ցաւալի է որ մինչեւ հիմա արձագանգ չի գտաւ մեր կոչը եւ Մ.Ճիւղերէ շատեր անհոգ գտնուեցան այդ առթիւ իրենցմէ պահանջուած տեղեկութիւնները տալու:

Առաջնորդ Դուրեան Աեպս.ի Մանուան Առքիւ

Ամերիկահայոց Առաջնորդ հանգուցեալ Ղեռնդ Աեպս. Դուրեանի եղբրական մահուան առթիւ Կեդր. Վարչութիւնս իր խորին ցաւակցութիւնները հրապարակաւ յայտնելով, Առաջնորդարան ուղարկեց 10 տոլար փոխան ծաղկեպսակի:

Ուսանողական Հարց

30-րդ Պատգ. Ժողովի որոշման համաձայն, Կեդր. Վարչութիւնս իր նիւթական օժանդակութիւնն ընծայեց կրթութեան կարօտ ու արժանի ուսանողներու: Ուսանողական հարցի կարգադրութիւնը յառաջիկային կը յանձնենք ձեր ուշադրութեան:

Հաշուեքննիչ Յանձնախումբի մասին

29-րդ եւ 30-րդ Պատգ. Ժողովներու առթիւ Ընկերութեան Հաշուեքննիչ Յանձնախումբը որ այնքան խրնամքով պատրաստեց եւ քննեց Ընկերութեան ընդհանուր հաշիւները, արժանի է մեր անկեղծ գնահատանքին եւ շնորհակալութեան: Մասնաւորապէս սոյն Յանձնախումբին երկու անդամները՝ Պրնք. Ռուբէն Պարմազեան եւ Իսրայէլ Տէր Յովհաննէսեան, որոնք անձնական մեծ զոհողութիւններով եւ ծանր աշխատանքներով խիստ պատուաբեր կերպով ներկայացուցին Կրթասիրացի ամբողջական հաշիւները ճշգրտօրէն եւ մանրամասն ու կանոնաւոր կերպով: Սակայն ցաւալի է ըսել որ Յանձնախումբի մէկ ուրիշ անդամը՝ Պր. Ա. Քեքեսեան՝ իր ստանձնած գործին մէջ չարաչար կերպով թերացաւ, հակառակ մեր կրկնակ թելադրանքներուն: Պր. Քեքեսեան մամուլով դուրս եկաւ անտեղի եւ անարդար քննադատութիւններով, իր մաղձը թափելու Կրթասիրացի հասցէին եւ այդպէսով յագեցնելու իր անհատական կիրքը, վարկարեկելու զոհաբերող անձեր եւ Կրթասիրացի նման օգտակար ընկերութիւններ: Սոյն ցաւալի պարագան կը յանձնենք ձեր լուրջ ուշադրութեան:

Կեղը. Վարչութիւնս նկատի ունենալով կարգ մը ան-
հատներու ընծայած բարոյական եւ նիւթական զոհողու-
թիւնները եւ մասնաւոր ծառայութիւնները, Կրթասիրա-
ցի զանազան օգտակար գործերուն մէջ, պատեհ առիթ
համարելով յարգոյ պատգամաւորներու կը յայտնէ ա-
նոնց անունները, որոնք արժանի են մեր գնահատանքին
եւ շնորհակալութեան:

Պր. Մկրտիչ Ասլանեան, Երեւան, հախկին ներկայա-
ցուցիչ Նոր Մալաթիոյ, իր շատ մը օգտակար թելադ-
րանքներուն ու Կրթասիրացի խիստ կենսական հարցերուն
մէջ: Երախտագիտութեամբ կը յիշենք անոր անունը որ
հայրենասիրական անկեղծ զգացումով իր կարելին ըրած
է մեր ձեռնարկներու յաջողութեան համար:

Պր. Խոսրով Պօնափարթեան, Նիւ Եորք, եւ Յարու-
թիւն Մարգարեան, Պէյրութ, որոնք գործակցած են մեզ
շատ մը որոշ եւ կարեւոր խնդիրներու մէջ:

Պր. Խոսրով Ոսկերիչեան, որ ազնուօրէն իր գործա-
տեղին ձրիաբար տրամադրեց մեր Վարչական ժողովնե-
րուն:

Կեղը. Վարչութեանս զիւանի բոլոր գործերը կա-
տարուած են առանց նիւթական ակնկալութեան ու վճա-
րումի, բաց ի հրաժարեալ հախկին քարտուղար Մ. Թօ-
փալեանի հինգ ամսուան վճարումներէն:

Ընկերութեանս մայր տոմարը պատրաստուած եւ
գրուած է խնամեալ ու մաքուր կերպով, նմանօրինակ
առանձին թէ հայերէնով եւ թէ անգլիերէնով:

ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սեպտ. 1, 1934



<< Ազգային գրադարան



NL0142570

guy 1p.

14494